ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Մարտունի, Շահումյան 7,
հեռ.՝ 060-74-34-01

№ 805

06 սեպտեմբեր 2021 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մանուկյան

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներից ելնելով, ուղարկվում են Մարտունի համայնքի ղեկավարի կողմից 30.08.2021թ. մինչև 03.09.2021թ. ընկած ժամանակահատվածում ընդունված որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

կատարող՝
Ռ.Սահակյան
հեռ.՝ 060-755-333

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 275-Ա

31 օգոստոսի 2021 թվական

ԱՌԱՆՑ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 56/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արշակ Գևորգի Բարսեղյանի դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 02.02.2002թ. «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի մասի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88-Ն որոշման պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կարեն Արշակի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող քաղաք Մարտունի, Մյասնիկյան փողոց թիվ 56/1 հասցեի 0,0046 քմ մակերեսով շինության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:
2.Պարտավորեցնել Արշակ Գևորգի Բարսեղյանին վճարել տեղական տուրք 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Պարտավորեցնել Արշակ Գևորգի Բարսեղյանին դիմել Հայաստանի Հանրապետության ԱԳ ԿԿ Երևանի տարածքային ստորաբաժանում կատարելու համապատասխան գրանցում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

31 օգոստոսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

Ն 276-Ա 02 սեպտեմբերի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 05-003-0451- ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005 թվականի №2387-Ն որոշման 48-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարտունի համայնքի 05-003-0451- ծածկագրով գույքին տրամադրել քաղաք Մարտունի Շահումյան փողոց, թիվ 7/6 հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

02 սեպտեմբերի 2021 թվական
ք. Մարտունի